

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 7

ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

02.02.2018

Ք. Իջևան

Մասնակցում էին գիտխորհրդի բոլոր անդամները.

ՕՐԱԿԱՐԳ

- 1. 2017-2018 ուստարվա առաջին քննաշրջանի արդյունքների ամփոփում: /Ձեկուցող՝ Ա. Ներսիսյան/*
- 2. 2017-2018 ուստարվա երկրորդ կիսամյակի նախապատրաստական աշխատանքների մասին: /Ձեկուցող՝ Ա. Ներսիսյան/*
- 3. 2017-2018 ուստարվա երկրորդ կիսամյակի անվանական կրթաթոշակի թեկնածուների առաջադրում: /Ձեկուցող՝ Ա. Ներսիսյան/*
- 4. Հումանիտար գիտությունների ֆակուլտետի 2017-2018 ուստարվա / կիսամյակի աշխատանքային պլանի քննարկման և հաստատման մասին: /Ձեկուցող՝ Ա. Ներսիսյան/*
- 5. «Հայոց պատմության և հասարակագիտության» ամբիոնի պրոֆեսոր, պ.գ.դ. Ա. Ներսիսյանի «Անկախ Ղարաբաղը 1917-1921 թվականներին» աշխատությունը հրատարակության երաշխավորելու հարցը: /Ձեկուցող՝ Դ. Թինոյան/*
- 6. Ընթացիկ հարցեր:*

ԼՄԵՑԻՆ.

Օրակարգի 1-ին հարցի վերաբերյալ զեկուցող Ա. Ներսիսյանը ներկայացրեց քննաշրջանի կազմակերպական աշխատանքների ընթացքը: Նշվեց, որ I կիսամյակի ավարտին ևս տեղի է ունեցել քննարկում, որի ժամանակ ներկայացվել են թվային տվյալները: Ձեկուցողը հավելեց, որ ձմեռային քննաշրջանի ընթացքը եղել է պատշաճ կազմակերպված և գտնվել է դեկանատի մշտական ուշադրության կենտրոնում: Ձեկուցողը ընդհանուր գծերով ներկայացրեց ակադեմիական պարտքերի պատկերը և նշեց, որ փետրվարի 5-ից սկսվում է 1-ին լուծարքային շրջանը: Դեկանը կարևորեց գործընթացը և համապատասխան հանձնարարականներ տվեց կրթական ծրագրերի ղեկավարներին՝ լուծարքային շրջանի հետ կապված:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Բ.գ.թ. Վ. Աղաբաբյանը, Բ.գ.թ., դոցենտ Ա. Սարհատյանը, ասիս. Ա. Մարդանյանը, մ.գ.թ. Լ. Հարությունյանը, Ջ. Վարտանյանը, Ռ. Հարությունյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

2017-2018 ուստարվա առաջին կիսամյակի քննությունների արդյունքները համարել բավարար:

ԼՄԵՑԻՆ.

Օրակարգի 2-րդ հարցի վերաբերյալ զեկուցեց ֆակուլտետի դեկան Ա. Ներսիսյանը: Ջեկուցողը հանգամանալի ներկայացրեց 2017-2018 ուստարվա երկրորդ կիսամյակի նախապատրաստական աշխատանքների ընթացքը: Առաջին հերթին նա ներկայացրեց ֆակուլտետի դասախոսների 2017-2018 ուստարվա երկրորդ կիսամյակի ուսումնական բեռնվածությունները: Անդրադարձավ իրականացված վերանայումներին, որոնց հետևանքով մի շարք դասախոսների առարկայական բաշխվածություններում և դրույքաչափերում տեղի են ունեցել փոփոխություններ: Ջեկուցողը ներկայացրեց, որ «Հայոց պատմության և հասարակագիտության» ամբիոնը դասախոսների անհատական ուսումնական ծանրաբեռնվածությունների պատճառով կատարել է փոփոխություն: Ամբիոնի պ.գ.թ., ասիստենտ Գ. Մելքոնյանի փոխարեն նույն աշխատանքները կղեկավարի ամբիոնի պ.գ.դ., պրոֆեսոր Ա. Ներսիսյանը:

Դեկանը նշեց, որ ուսումնական պարապմունքները կվերսկսվեն փետրվարի հինգին: Արդեն պատրաստ են ձմեռային քննաշրջանի 1-ին լուծարքային շրջանի գրաֆիկները, երկրորդ կիսամյակի դասատախտակները: Ջեկուցողը նշեց, որ մի շարք կուրսեր փետրվարի 5-ից մարտի 2-ն ընկած ժամանակահատվածում դպրոցներում կանցկացնեն ուսումնական պլանով նախատեսված մանկավարժական և արտադրական պրակտիկա:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Պ.գ.թ. Ս. Առաքելյանը, Բ.գ.թ. Վ. Աղաբաբյանը, Բ.գ.թ., դոցենտ Ա. Սարհատյանը, մ.գ.թ. Լ. Հարությունյանը, Ջ. Վարտանյանը, Ռ. Հարությունյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

- 2017-2018 ուստարվա երկրորդ կիսամյակի նախապատրաստական աշխատանքների ընթացքը գնահատել բավարար:*

2. *Հավանության արժանացնել ներկայացված փոփոխությունները և հաստատել:*

ԼՄԵՑԻՆ.

Օրակարգի 3-ին հարցի վերաբերյալ զեկուցեց ֆակուլտետի ղեկան Ա. Ներսիսյանը: Զեկուցողը նշեց այն չափանիշները, որոնք հաղթահարելուց հետո ուսանողը կարող է հավակնել անվանական կրթաթոշակի, որոնք են՝ անատարկելի ակադեմիական բարձր առաջադիմությունը, պատշաճ կարգապահությունը և հասարակական ակտիվությունը: Ա. Ներսիսյանը փաստեց, որ ֆակուլտետում նվազում է անընդմեջ ակադեմիական բարձր առաջադիմություն ցուցաբերող ուսանողների թիվը, որը խոչընդոտ է հանդիսանում նրանց անվանական կրթաթոշակի ներկայացնելուն: Այդուհանդերձ, նման ուսանողներ կան և պետք է խրախուսել նրանց:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

«Պատմություն» մասնագիտության կրթական ծրագրի պատասխանատու Ն. Գրիգորյանը նշեց, որ ուսանողների մեջ իր առաջադիմությամբ, կարգապահությամբ և ակտիվությամբ աչքի է ընկնում 3-րդ կուրսի ուսանող Վանուհի Գևորգյանը: Վերջինս մշտապես ակտիվ է թե՛ դասերի ընթացքում, թե՛ հասարակական հանձնարարություններ կատարելիս, երեք կիսամյակ անընդմեջ ցուցաբերել է գերազանց առաջադիմություն և այդ պատճառով նպատակահարմար է Վանուհի Գևորգյանին առաջադրել «Մխիթար Գոշ» անվանական կրթաթոշակի թեկնածու:

«Անգլերեն լեզու և գրականություն» մասնագիտության կրթական ծրագրի պատասխանատու Ա. Սիմոնյանը նշեց, որ ուսանողների մեջ իր առաջադիմությամբ, կարգապահությամբ և ակտիվությամբ աչքի է ընկնում 3-րդ կուրսի ավագ Էլինա Խաչատրյանը: Վերջինս մշտապես ակտիվ է թե՛ դասերի ընթացքում, թե՛ հասարակական հանձնարարություններ կատարելիս, երեք կիսամյակ անընդմեջ ցուցաբերել է գերազանց առաջադիմություն և այդ պատճառով նպատակահարմար է Էլինա Խաչատրյանին առաջադրել «Շառլ Ազնավուր» անվանական կրթաթոշակի թեկնածու:

Կրթական ծրագրի ղեկավարը նույն կուրսից առանձնացրեց նաև Լիլիթ Ֆարմազյանին և Սյուզաննա Շահնազարյանին: Նրանք վերջին երեք կիսամյակում

անընդմեջ գերազանց առաջադիմություն ունեն: Լիլիթ Ֆարմազյանին զեկուցողն առաջարկեց որպես «Մոնթե Մելքոնյանի» անվան կրթաթոշակի թեկնածու, իսկ Սյուզաննա Շահնազարյանին՝ «Վազգեն Սարգսյանի» անվան կրթաթոշակի թեկնածու:

«Հայոց լեզու և գրականություն» կրթական ծրագրի պատասխանատու Ա. Սարհատյանը «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտության ուսանողներից առանձնացրեց 2-րդ կուրսի ավագ Աստղիկ Ղազարյանի թեկնածությունը: Ձեկուցողը նշեց, որ վերջինս երեք կիսամյակ անընդմեջ գերազանց առաջադիմություն ունի: Ձեկուցողը առաջարկեց Աստղիկ Ղազարյանին ներկայացնել որպես «Գրիգոր Նարեկացի» անվանական կրթաթոշակի թեկնածու:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Դիմել մասնաճյուղի տնօրինությանը՝ հաստատել Վանուհի Գևորգյանին որպես «Մխիթար Գոշ», Էլինա Խաչատրյանին՝ «Շառլ Ազնավուր», Աստղիկ Ղազարյանին՝ «Գրիգոր Նարեկացի», Լիլիթ Ֆարմազյանին՝ «Մոնթե Մելքոնյան» և Սյուզաննա Շահնազարյանին «Վազգեն Սարգսյան» անվանական կրթաթոշակի:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի 4-րդ հարցի վերաբերյալ զեկուցեց ֆակուլտետի դեկան Ա. Ներսիսյանը: Ձեկուցողը նշեց, որ ֆակուլտետի 2017-2018 ուստարվա II կիսամյակի ուսումնական գործունեությունը կազմակերպված և նպատակային վարելու առումով աշխատանքային պլանում կատարվել են որոշակի փոփոխություններ: Այս փոփոխությունները թույլ են տալիս ֆակուլտետի գործունեությունը դարձնել առավել ճկուն և արդյունավետ: Դեկանը հայտնեց, որ աշխատանքային պլանը նախապես քննարկվել է դեկանատի նիստում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Բ.գ.թ., դոցենտ Վ. Ավագյանը, Բ.գ.թ., դոցենտ Ա. Սարհատյանը, ասիս. Ա. Մարդանյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հաստատել Հումանիտար գիտությունների ֆակուլտետի 2017-2018 ուստարվա երկրորդ կիսամյակի աշխատանքային պլանը:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի 5-րդ հարցի վերաբերյալ ելույթ ունեցավ «Հայոց պատմության և հասարակագիտության» ամբիոնի վարիչ պ.գ.թ., դոցենտ Դ. Թինոյանը: Ջեկուցողը ներկայացրեց պ.գ.դ., պրոֆեսոր Ա. Ներսիսյանի «Անկախ Ղարաբաղը 1917-1921 թվականներին» եռահատոր աշխատության առաջին պրակը հրատարակության երաշխավորելու հարցը: Նշվեց, որ աշխատությունը գրախոսվել է պ.գ.դ., պրոֆեսոր Հ. Գևորգյանի և պ.գ.դ., պրոֆեսոր Վ. Թունյանի կողմից:

Ջեկուցողը նշեց, որ աշխատության առաջին պրակում հեղինակը քննական վերլուծության է ենթարկել Ղարաբաղի պատմությունը 1917 թվականի փետրվարից մինչև 1918 թվականի փետրվարն ընկած ժամանակահատվածում և փաստական առատ նյութի օգտագործմամբ ապացուցել է, որ Ղարաբաղը եղել է անկախ քաղաքական միավոր: Ղարաբաղն իր այդ անկախությունը պահպանել է նաև հետագայում՝ 1918-1921 թվականներին՝ երբեք մաս չկազմելով Ադրբեջանին:

Ջեկուցողը հավելեց, որ աշխատությունն ունի ոչ միայն պատմագիտական, այլև քաղաքական արժեք, քանի որ այն կարող է օգտագործվել Ղարաբաղի խնդրի շուրջ այսօրվա քաղաքական գործընթացներում հայկական դիվանագիտության հաղթանակների ամրապնդման տեսանկյունից:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Պ.գ.դ., պրոֆեսոր Ռ. Նահապետյանը, պ.գ.թ., դոցենտ Ս. Առաքելյանը, պ.գ.թ., դոցենտ Վ. Ալեքսանյանը: Արտահայտվողները առաջարկեցին երաշխավորել պ.գ.դ., պրոֆեսոր Ա. Ներսիսյանի «Անկախ Ղարաբաղը 1917-1921 թվականներին» աշխատությունը և հանձնել տպագրության:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Միջնորդել մասնաճյուղի գիտխորհրդին պ.գ.դ., պրոֆեսոր Ա. Ներսիսյանի «Անկախ Ղարաբաղը 1917-1921 թվականներին» աշխատությունը երաշխավորելու հրատարակության:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

ՔԱՐՏՈՒՂԱՐ

Ա. Ներսիսյան

Վ. Աղաբաբյան